

ինչ որ պիտի կրկնուի բարեփոխուած: Այնպէս որ երկտողիս ջատագոված կրկնութեան գաղափարը ոչ թէ անշարժութիւն է քարոզում, այլ մի միջոց հիմնաւորութեան, հաստատութեան և յարատե յառաջադիմութեան կրկնողութեան օրէնքով: Կրկնողութիւնը կարելի է ասել մի տեսակ մշտական, քայլ առ քայլ, կանոնաւոր վերածնութիւն է: Իսկ մի բան որ չի կրկնուում, իհարկէ, մոռացւում է, թուլանում է, ընկնում է և կամ մեռնում:

Արդ, չը թերանանք կրկնել ինչ որ արժան է, պարտաւորութիւն է, կենսական պահանջ է և միշտ յիշենք իմաստուն առածը՝ «Բեպետիցիօ էստ մատեր ստուղիօ» — կրկնութիւնն է մայր ուսման:

Ն. Վ. Տ. Ա.

2-ն Յունուարի

Ա. Էջմիածին.

ՆԱԽՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

(Ըստ Բուլհակսվի)

Հոկտեմբերի 31-ին Մոսկուայի Պօլիտեխնիքական թանգարանի դահլիճում տեղի է ունեցել Կրօնա-Փիլիսոփայական Ընկերութեան ժողովրդ, ուր ուսուցչապետ Ս. Ն. Բուլհակովը կարդացել է մի շարադրութիւն նախնական քրիստոնէութեան մասին, որից բերում ենք մի քանի քաղւածքներ,

Քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը, դասախօսի կարծիքով, չի առաջացել հեթանոսական կուտուրական աշխարհի ժամանակակից դրութեան պատճառով, որը դեռ այնժամանակ շատ հեռու էր քայքայումից: Քրիստոնէութիւնը չբարոգուեց էլ հեթանոս աշխարհի ներսը, այլ արևելքում, հրէութեան շրջանում, որոնք այն ժամանակ աշխարհի վերջի մասին ասարածուած կարծիքով անց էին կացնում տենգային կեանք: Հրէական յայտնութիւնները գալիս էին քրիստոնէականից առաջ և վերջինս առաջինս

ների հետ կենդանի մերձաւոր կապ ունի: Քրիստոնէական Յայտնութեան գիրքը քրիստոնէական սրբազան գրքերից ամենահրէականն է և նրա տեղը ոչ թէ նոր Ուխտի վերջումն է, այլ սկզբում: Սա մի տեսակ կամուրջ է հրէութեան և քրիստոնէութեան միջև: Յայտնութեան գիրքը կեդանի կերպով նկարագրում է նախնական քրիստոնեաներին, նրանց վառ հաւատքը համաշխարհային աղետի մօտալուտ լինելու մասին: Նախնական քրիստոնեաները անհամբերութեամբ սպասում էին աշխարհի վերջին և Քրիստոսի երկրորդ անգամ գալստեան, որ նրանց այնքան մօտ էր թւում, որ նրանք սպասւմ էին ամեն րոպէ: Այս հաւատքը անշնչելի կնկիք դրեց նախնական քրիստոնեաների անձի և ուսման վրայ: Նրանք չէին կարողանում գնահատել այս աշխարհի բարիքները, որոնք դատապարտուած էին շուտով ոչնչացման, նոքա կտրւում էին աշխարհից, ուր ամեն ինչ կարծես վերջացած էր և ապրում էին երկնային թագաւորութեան խոհերով: Երկրային աշխարհը նրանց թւում էր սադայելի թագաւորութիւն, իրանց շուրջը նոքա տեսնում էին յաղթական հեթանոսութիւնը, միայն կռապաշտութիւն և յանցանք, չնկատե (ով և չկամենալով տեսնել հեթանոս կուլտուրան):

Պօղոս առաքեալը գնալով Աթէնք, այստեղ տեսնում է միայն կուռքը և չի նկատում հին կուլտուրան. քրիստոնէութեան սւտուցիչների ջանքը ուղղուած էր այն բանին, որ հեռացնեն հաւատացեալներին կռապաշտ աշխարհից (արգելում էին կուռքին զոհաբերուած միսն ուտել, խառն ամուսնութիւնը, դատարանին դիմելը): Քրիստոնէութիւնը առաջ քաշելով անհատի հոգեկան աշխարհը, չէր ճանաչում պետութիւն, որին վիճակուած էր շուտափոյթ կորուստ. բայց քրիստոնեաները հեռու էին յեղափոխական տրամադրութիւնից, նրանց ուսուցիչները նոյնիսկ առանձին եռանդով խորհուրդ էին աւելիս հնազանդ լինել իշխանութեան: Եւ ինչի՞ համար փոփոխել քաղաքական կամ հասարակական կազմը, որը, միեւնոյն է, շուտով պիտի խորտակուի գերագոյն ուժով: Քրիստոնեաները չէին մաս-

նակցում հրէական ազգային ապստամբութեան: Նրանք կրաւորապէս էին վերաբերում նոյնպէս և ստրկութեան, միայն օժանդակում էին նրա թեթեւացնելուն Բրիտտոսի առաջ բոլորի հաւաստութեան վարդապետութեամբ: Աշխարհի վերջին սպասելով է բացատրում և նրանց բացասական վերաբերմունքը դէպի սեպհականութիւնն ու հարստութիւնը, հրաժարուելով այս աշխարհից, նոքա չէին կարող թանկ գնահատել երկրային բարիքները. իբրև ուղիղ միջոց, նոքա առաջ էին մղում լայն բարեգործութեան սկզբունքը:

Ապա դասախօսը ժառանգելով առաջին քրիստոնեաների մէջ դաւանանքի թոյլ զարգացումը, ժամասացութեան և որոշ պաշտօնէութեան անմշակութիւնը, կանգ առաւ այն ուժի վրայ, որով լի էին առաջին քրիստոնեաները և որի շնորհիւ նոքա յաղթեցին աշխարհին: Այդ ուժը կրօնական զգացմունքի բեղունութիւնն է, խոր և փառ հաւատն է: Առաջին քրիստոնեաները ապրում էին մշտական և իրական հաղորդակցութեան մէջ աստուածութեան հետ. նոքա իրանց մէջ զգում էին Աստծուն, զգում էին մեծ հրճուանք, որ լցնում էր նոցա սիրտը: Այս զգացմունքը հնարաւորութիւն էր առ իս նրանց իրանց կեանքը կառուցանել մաքրութեան, անշահասիրութեան, գործնական սիրոյ հիմքերի վրայ: Եւ հէնց այս ուժը յաղթեց աշխարհին: Այդ ուժը քրիստոնէութեան էութիւնն է, դրան մենք պատահում ենք և յետագայում: Նախնական քրիստոնէութիւնն այն լուսատունն է, որը պիտի ուսաւորի մեր կեանքի ճանապարհը:

